

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանը հայտարարում է աճուրդով վաճառք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող 537 CL 61 հաշվառման համարանիշով NISSAN մակնիշի SENTRA 1.8 տիպարի 2013 թվականի արտադրված սև գույնի վնասված և անսարք վիճակում գտնվող թեթև մարդատար սեղան տեսակի տրանսպորտային միջոցի՝ մեկնարկային գինը սահմանել հավանական շուկայական արժեքի գնով՝ 1805000 /մեկ միլիոն ութ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 23-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի շենքում /մ. Արմավիր, հ. Խոյ, գ. Գեղակերտ Մ. Մաշտոց փողոց 30 շենք/: Մասնակցության վճարը 15000 ՀՀ դրամ: Սահմանափակումներ չկան: Հայտերն ընդունվում են և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: **Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Խոյի համայնքապետարան: Հեռ. 060-888-999**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող Գեղակերտ գյուղի Ե. Խաչատրյան փողոց 14 հասցեի 04-087-0068-054 կադաստրային ծածկագրով 1,0708 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը, որի վրա առկա է՝ 187,2 քմ և 9,7 քմ անասնաշենք, 130,4 քմ և 165,4քմ կիսակառույց շինություն, 32,10 քմ և 19,5 քմ անասնաշենք 50-80% ավարտվածության աստիճանի, շինություններ՝ 25 տարի ժամկետով, 150000 /մեկ հայուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարի մեկնարկային գնով մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 23-ին ժամը 14:00-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի շենքում /մ. Արմավիր, հ. Խոյ, գ. Գեղակերտ Մ. Մաշտոց փողոց 30 շենք/:

Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի նվազագույնը 5 %-ի չափով: Նախավճարի չափը 5 %: Մասնակցության վճարը 15000 ՀՀ դրամ: Սահմանափակումներ չկան:Հայտերն ընդունվում են և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

***Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Խոյի համայնքապետարան:***

***Հեռ. 060-888999***